

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

*МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ,
ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ*

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

*MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION
DEDICATED TO THE 95TH ANNIVERSARY OF YSU*

1.5 (8)

Общественные науки - Social sciences

(Юриспруденция и политология) - (Jurisprudence and Political science)

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

*ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐԿԱԾ
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ*

1.5 (8)

*Հասարակական գիտություններ
(Իրավագիտություն և քաղաքագիտություն)*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԿՉՈՒԹՅՈՒՆ

2015

Հրատարակվում է
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ի. գ. դ., պրոֆ. Ա. Գաբուզյան
ի. գ. դ., պրոֆ. Ս. Դիլբանդյան
ի. գ. դ., պրոֆ. Ա. Վաղարշյան
բ. գ. դ., պրոֆ. Գ. Զեռյան
ի. գ. թ., դոց. Լ. Մելիքջանյան
ի. գ. թ., դոց. Գ. Բեքմեզյան
ս. գ. թ., դոց. Մ. Վարդազարյան

Редакционная коллегия:

д. ю. н., проф. А. Габузян
д. ю. н., проф. С. Дилбандян
д. ю. н., проф. А. Вагаршян
д. п. н., проф. Г. Керян
к. ю. н., доц. Л. Меликджанян
к. ю. н., доц. Г. Бекмезян
к. и. н., доц. М. Вардазарян

Editorial Board

DSc, prof. A. Gabuzyan
DSc, prof. S. Dilbandyan
DSc, prof. A. Vagharshyan
DSc, prof. G. Keryan
PhD, associate prof. L. Melikjanyan
PhD, associate prof. G. Bekmezyan
PhD, associate prof. M. Vardazaryan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ ***Մ. Մալխասյան***

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am
Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական
գիտական ընկերություն
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspub@ysu.am, sss@ysu.am
ԵՊՀ ՌԻԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.yasu.am

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Քաղաքական մասնակցությունը ժողովրդավարական քաղաքականության ստեղծման և իրականացման ողջ մեխանիզմն է, քաղաքականության սուբյեկտների գործունեությունը՝ իր բազմաճյուղ դրսևորումներով: «Քաղաքական մասնակցություն» հասկացությամբ նկատի է առնվում մարդկանց, քաղաքացիների մասնակցությունը քաղաքական կյանքին, քաղաքականությանը, քաղաքական գործունեությանը:

Քաղաքական կյանքին մարդկանց մասնակցության փաստի վրա ուշադրություն է դարձվել անտիկ ժամանակներից սկսած: Արիստոտելը, խոսելով քաղաքականության մասին, գտնում էր, որ քաղաքականությունը մարդկանց միջև շփման յուրահատուկ ձև է, և փաստում, որ քաղաքական շփումը ենթադրում է առանձին մարդկանց փոխհարաբերությունը պետության հետ՝ որպես առանձին մասնիկների փոխազդեցություն հասարակական ամբողջի հետ¹: Արիստոտելը նշում է, որ մարդը հասարակական-քաղաքական էակ է, որը միշտ ձգտում է միասնական կյանքի: Ըստ նրա՝ մարդու մոտ միշտ առկա են իշխելու և ենթարկվելու պահանջմունքները²:

Մասնակցությունը քաղաքական կյանքին պահանջում է լրացուցիչ աշխատանք, գիտելիքներ, նյութական միջոցներ, մրցակցության համար անհրաժեշտ հոգեբանական պատրաստվածություն և այլն: Արդիականացման ներկայիս գործընթացներում գոյություն ունեն քաղաքական մասնակցության երկու հիմնական մոտեցումներ՝ ազատական և պահպանողական: Ազատական ուղղվածության կողմնակիցները գտնում են, որ ժողովրդավարական քաղաքական մասնակցության ընդլայնումը քաղաքական իշխանության լեգիտիմության հուսալի միջոց է, մրցակից քաղաքական կուսակցությունների փոխադարձ անվտանգության պահպանման լավագույն ձև:

Պահպանողական ուղղվածության կողմնակիցները քաղաքական մասնակցության մասշտաբների ընդլայնման մեջ տեսնում են ազգային միասնության և համակարգի կայուն հիմքերի խաթարման վտանգ: Նրանք գտնում են, որ քաղաքական մասնակցության մասշտաբները պետք է հասցնել նվազագույնի և թույլ տալ, որ քաղաքական որոշումները կայացնեն այն մարդիկ, ովքեր առավել տեղեկացված և ընդունակ են՝ հետևելու քաղաքական զարգացման գծին:

Քաղաքական մասնակցությունը դիտարկվում է որպես հասարակության անդամների ներգրավվածություն քաղաքական հարաբերություններում՝ անհատական, դասային, էթնիկական, կրոնական կամ այլ հիմքերով, քաղաքական կյանքին, մասնակցություն քաղաքական որոշումների ընդունման և իրականացման գործընթացներին՝ ելնելով շահերից, հոգևոր պահանջմունքներից ու նպատակներից³:

¹ Տե՛ս **Аристотель**, Сочинения, Москва, 1983, т. 4, էջ 376-383:

² Տե՛ս նույն տեղում:

³ **Շափաղաթյան Յ.**, Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ, Երևան, 2007, էջ 16-17:

Քաղաքական գործընթացներում մարդկանց ներգրավվածությունը միանշանակ է: Հասարակության որոշ անդամներ ակտիվ մասնակցում են քաղաքական կյանքին, առավելագույն չափով հետաքրքրված են տեղի ունեցող գործընթացներով, իսկ հասարակության որոշ անդամներ էլ հետաքրքրված չեն դրանցով: Ոմանք էլ ո՛չ ակտիվ, ո՛չ էլ պասիվ մասնակցություն են ունենում քաղաքական կյանքին: 20-րդ դ. վերջին տասնամյակից սկսած բազմաթիվ երկրներ Նոր մեխանիզմներ են որոնում՝ զարգացման նախաձեռնություններում և կառավարման գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունն առավել ուղղակի և արդյունավետ դարձնելու համար՝ սկսած ապակենտրոնացված ինստիտուտներ ստեղծելուց մինչև մասնակցային և խորհրդատվական գործընթացների բազմաթիվ ձևերի կիրառումը: Ընդհանուր առմամբ զարգացմանն ուղղված նախաձեռնությունները հաջողված են, եթե դրանք իրականացվում են քաղաքացիների ներգրավվածությամբ և ակտիվ մասնակցությամբ: Մասնակցությունը իրականացվող քաղաքականությանն առավել զգայուն է դարձնում աղբատների կարիքների նկատմամբ, իսկ ծրագրերը՝ առավել արդյունավետ:

«Քաղաքացիական ներգրավվածության» և «մասնակցության» մասին խոսելիս պետք է նշել, որ դրանք հաճախ օգտագործվում են որպես փոխադարձաբար փոխարինելի հասկացություններ, այսինքն՝ գրեթե նույնացվում են: Այս պարագայում դժվար է հստակ տարանջատում կատարել տվյալ հասկացությունների բովանդակության միջև: Մի շարք մոտեցումների համաձայն՝ «մասնակցություն» հասկացությունը դիտարկվում է որպես «քաղաքացիական ներգրավվածություն» հասկացության մի մաս, դրա առավել ինտենսիվ և կազմակերպված դրսևորում: Չարգացման նախաձեռնությունների և դրանց մասը կազմող հայեցակարգերի՝ քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության քաղաքականության կենսագործման ընթացքում արդիական է դրանց իրագործելիության ու փաստացի դրսևորումների չափման խնդիրը:

Որպես կանոն, քաղաքական մասնակցության ձևերը երկուսն են՝ ակտիվ և պասիվ: Պասիվի դեպքում մարդիկ տեղեկություններ կամ խորհրդատվություն են ստանում, մասնակցում են գործընթացին, բայց փոխադարձ կապ չկա:

Մեկ այլ տեսակ է մասնակցությունը հանուն նյութական խթանների: Այս պարագայում հավաքվում է համայնքը, նյութական աջակցություն է տրամադրվում, և մարդիկ մասնակցում են հանուն նյութական խթանների:

Քաղաքական մասնակցությունը արտահայտվում է երկու ձևով՝ անմիջական և ներկայացուցչական: Անմիջական մասնակցության ձևերն են ընտրությունները, հանրահավաքները: Ներկայացուցչական մասնակցության ժամանակ զանգվածներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին՝ պատգամավորներ, պաշտոնատար և լիազորված անձինք՝ քաղաքական իշխանության իրականացման և իրենց շահերը ներկայացնելու համար:

Ժողովրդավարությունն իրականանում է, երբ քաղաքացիներն ակտիվորեն նվիրվում են քաղաքական կյանքին: Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը քաղաքացիական հասարակության կայացման հիմնական սկզբունքներից մեկն է: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք: Կառավարության իշխանության հիմքում պետք է լինի ժողովրդի կամքը»¹: Քաղաքացիների կամքի արտահայտությունը ժողովրդավարության հիմքն է: Սակայն նշենք պատճառները, որոնց դեպքում քաղաքացիները չեն մասնակցում հասարակական կյանքին.

- Նրանք չեն հավատում իրենց արածի արդյունքին,

¹ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 10.12.1948 թ., հոդված 4:

- Հասարակական կյանքը չի ազդում իրենց անձնական կյանքի վրա,
- Այդ հարցերը բարդ են թվում:

Նկարագրելով քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության հասկացությունները՝ փորձենք տալ դրանց սահմանումները: Քաղաքացիական ներգրավվածությունը սահմանվում է որպես մասնավոր անձանց մասնակցություն հանրային կյանքին, որը տեղի է ունենում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիների լայն շրջանների և պետության, բազմապրոֆիլ ինստիտուտների ու բիզնես հաստատությունների միջև ուղղակի և անուղղակի փոխազդեցությունների միջոցով՝ որոշումների կայացման վրա ազդեցություն ունենալու կամ համընդհանուր նպատակներ հետապնդելու դեպքում: Դա մի գործընթաց է, որը համախմբում է և կազմակերպում քաղաքացիներին կամ նրանց կողմից վստահված ներկայացուցիչներին «ազդելու, ձևավորելու և վերահսկելու հանրային ինդիքները և զարգացման նախաձեռնությունները, դրանց իրականացումն ու ռեսուրսները»¹:

Համաձայն ՄԱԿ (Glossary) սահմանման՝ մասնակցությունը զարգացման կամ կառավարման մոտեցում է, որի համաձայն քաղաքավարության կամ միջամտության առանցքային շահագրգիռ կողմերը ներգրավված են հիմնախնդիրների և գերակայությունների սահմանման գործընթացում ու նշանակալիորեն վերահսկում են ծրագրերի պլանավորումը, իրականացումը²:

Ինչպես նշվում է բրիտանական INTRAC ուսուցողական և հետազոտական կենտրոնի՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարությանը ներկայացված հաշվետվությունում, մասնակցությունը դիտարկվում է որպես լայն հասկացություն, որը տարբեր մեկնաբանությունների է ենթարկվում: Նպատակ չունենալով միասնական հստակ սահմանում տալ այդ հասկացությանը՝ հաշվետվությունում նշվում է, որ այն տեխնիկական կամ գիտական հասկացություն է և առավելապես պետք է դիտարկվի որպես զարգացման քաղաքականությունների և պրակտիկաների կազմակերպման ու մոտիվացման սկզբունք: Մասնակցությանը վերաբերող ՄՁՆ տեխնիկական գրառումներում ներկայացվում է մասնակցության չորս առանցքային տարր՝ տեղեկացում, խորհրդատվություն, գործընկերային հարաբերություն, վերահսկողություն³:

Մասնակցությունը կարող է տարաբնույթ լինել: Այն կարող է դրսևորվել՝

- Տարբեր ոլորտներում (քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլն),
- Տարբեր ձևերով (ուղղակի-անուղղակի),
- Տարբեր կերպով (ըստ իր կազմակերպվածության աստիճանի՝ սկսած պատժամիջոցներից, վերջացած քաղաքացիական հասարակության կայուն սուբյեկտների ձևավորմամբ և գործառնությամբ),
- Տարբեր խորությամբ (այսինքն՝ սովորաբար հասկացվում է այն աստիճանը, որով քաղաքացիական հասարակության սուբյեկտները հնարավորություն ունեն ներթափանցելու կառավարության ներսը և մասնակցելու որոշումների կայացման բուն գործընթացին),
- Ըստ ընդգրկման տարբեր աստիճանների (մասնակցության գործընթացում առավել բազմաբնույթ խմբերի ներառում, մասնակցության շրջանակի ընդլայնում՝ կառավարող ընտրախապին իրենց բնութագրիչներով՝ ոչ նման խմբերի ընդգրկմամբ),

¹ Enabling environments for Civic Engagement in PSRP countries (ARVIN). Social Development Notes. Note No 82. March 2003, p. 12.

² Տե՛ս www.un.org:

³ The Participatory Approaches dearning Study (PALS) Overview Report (International NGO Training and Research Centre) For the Department of International Development UK, October 1999.

- Ազդեցության մասշտաբով (Նախագծի, զարգացման ծրագրի և քաղաքականության շրջանակներում),
- Միտված լինելով որոշակի օբյեկտի (ըստ որևէ հատկանիշի առանձնացված գործողության ոլորտ, որին առնչվում է տվյալ մասնակցային գործողությունը), առարկայի (ինդիք, որի բացահայտմանն ու լուծմանն է նպատակամղված տվյալ մասնակցային գործողությունը),
- Որոշակի սուբյեկտների միջոցով¹:

Մասնակցային գործընթացը ընթանում է երեք փուլով՝ նախապատրաստում, հզորացում, ինստիտուցիոնալացում:

Մասնակցային մեխանիզմները կարող են ամրագրվել օրենքներում՝ պարտադրելով կառավարությանը կամ նրա առանձին կառույցներին, հասարակական դերակատարներին ներգրավել հանրային քաղաքականության այս կամ այն գործընթացում: Ընդհանուր առմամբ, մասնակցությունը դառնում է անիմաստ, քանի դեռ իշխանությունն ունեցող սուբյեկտները չեն թույլատրում մյուսներին մասնակցել առաջնահերթությունների սահմանման, որոշումների կայացման, ռեսուրսների կառավարման և վերահսկման գործընթացներին: Քաղաքացիական մասնակցությունը, որպես կամավոր քայլի դրսևորում, օգնում է համերաշխ հայացքներ ձևավորել և հզորացնել ժողովրդավարական կառավարումը: Չարգացման գործընթացներում քաղաքացիների մասնակցությունը հանգեցնում է առավել արդյունավետ և կայուն ծրագրերի իրականացմանը՝ մասնակիցներին «սեփականության զգացում» հաղորդելով և տեղական փորձն ու առաջնահերթությունները դարձնելով ծրագրերի ընտրության, նախագծման և իրականացման մաս:

«Քաղաքացիական ներգրավվածություն» և «մասնակցություն» հասկացությունների հարաբերակցության մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ «քաղաքացիական ներգրավվածություն» հասկացությունն ավելի լայն է, քան «մասնակցությունը», այսինքն՝ մասնակցությունը քաղաքացիական ներգրավվածության առավել ակտիվ դրսևորումներից է: Մասնակցությունը այնպիսի պայմանների ստեղծմանն ուղղված ջանքերի գործադրումն է, որոնք կարող են նպաստել հզորացնելու հասարակության այն անդամներին և խմբերին, ովքեր իրենց կյանքը պայմանավորող ուժերի վերահսկման գործում նվազ հսկողություն ունեն²:

Քաղաքացիների մասնակցության աստիճանը մեծացնելու առումով կարևոր նշանակություն ունեն նաև հասարակական կազմակերպությունները: Հասարակական կազմակերպություններին անդամագրվելով՝ քաղաքացիներն ակտիվորեն մասնակցում են հասարակական կյանքին:

Խոսելով քաղաքական մասնակցության մասին՝ մենք չենք կարող չանդրադարձալ հաշմանդամներին: Նրանց մասնակցության աստիճանը բավականին ցածր է: Մեր հանրապետության շատ հաշմանդամների համար առաջնային խնդիր է իրենց իրավունքների իմացությունը և դրանցից օգտվելու հնարավորությունը: Այսօր ՀՀ-ներից մի քանիսն զբաղվում են հաշմանդամների օրինական իրավունքների պաշտպանությամբ: Եկել է ժամանակը, որ հաշմանդամներն ինտեգրվեն հասարակության մեջ և ակտիվ մասնակցություն ունենան հասարակական կյանքին:

Պետք է նշել, որ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է կոնկրետ իրավիճակից, քաղաքական համակարգի բնույթից, ինչպես նաև մարդուց: Մարդն ինքն է ստեղծում քաղաքական կեցություն՝ սեփական քաղաքական գործունեության և հասարակության մեջ իր վարվելակերպի միջոցով:

¹ «Մասնակցային գործունեության ուղեցույց», Երևան, 2004, էջ 23-24:

² Who changes? Institutionalizing participation in development, ed. by J. Blackburn, J. Holland, Intermediate technology publication, 1998, p. 3.

Քաղաքական մասնակցության բնույթի և ուղղվածության վրա էական ազդեցություն ունի հասարակության քաղաքական մշակույթի մակարդակը¹, որն արտացոլվում է ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների ընդունման ու ընկալման մեջ: Այստեղից կարող ենք ենթադրել, որ հասարակական գիտակցության մեջ որքան բարձր են ժողովրդավարական արժեքները, այնքան բարձր է քաղաքական մասնակցության աստիճանը: Եվ հակառակը, որքան ցածր է ժողովրդավարական իրավունքների և ազատությունների նշանակության աստիճանը, այնքան բնակչության զգալի մասի մոտ նկատվում է համակրանք և օտարում քաղաքական կյանքից:

Քաղաքական կյանքին ավելորդ ներգրավվածությունը նպաստում է նյարդային լարվածությանը: Իսկ մյուս կողմից մարդկանց երկարատև օտարումն իշխանությունից ձևավորում է իրենց իսկ պահանջումներին իրականացման անկարողություն, ծայրահեղականության հակումներ և այլն: Քաղաքական մասնակցության մեջ անձի ներգրավման պատճառները կարող են տարբեր լինել: Առհասարակ, քաղաքականությամբ հետաքրքրվող մարդիկ փոքրամասնություն են կազմում: Մարդկանց մեծամասնությունը անտարբերություն է ցուցաբերում քաղաքականության նկատմամբ: Այդ մարդիկ կորցնում են իրենց հավատը սեփական հնարավորությունների նկատմամբ և կարծում են, որ իրենց մասնակցությամբ ոչինչ չի կարող փոխվել քաղաքականության մեջ: Նրանք, հիասթափվելով քաղաքական կուսակցությունների տված խոստումներից, ինքնաբերաբար օտարվում են քաղաքականությունից:

Զմասնակցելու երևույթի պատճառները բացատրվում են քաղաքական և սոցիալական համակարգի ոչ բավարար գործունեությամբ, որը և նպաստում է մարդկանց որոշ մասի օտարմանը քաղաքականությունից, այսինքն՝ հասարակության մեջ չկան բավարար ակտիվ ուժեր, որոնք ընդունակ լինեն խթանելու բոլորի ակտիվությունը: Քաղաքական կյանքին մարդկանց չմասնակցելը, ընդհանուր առմամբ, չի դիտվում որպես դրական երևույթ: Դա ամենևին հիմք չի տալիս քաղաքական կյանքին չմասնակցելը բոլոր դեպքերում համարել անընդունելի և քաղաքակիրթ կյանքին անհարիր երևույթ: Զմասնակցության երևույթը բավականին տարածված է մեր օրերում, հատկապես՝ ժողովրդավարական պետություններում:

Հարկ է նշել, որ չմասնակցությունը գնահատվում է ոչ միանշանակ: Շատերը այն դիտում են որպես հասարակության կայունությունը խարխիլող վտանգ, պետությանը սպառնացող բացասական երևույթ, իշխանության լեգիտիմության նվազման միտում, իսկ ոմանք էլ հակառակ կարծիքին են՝ այն դիտելով որպես պետությունից անկախ քաղաքացիական հասարակության զարգացման արտահայտություն: Դա վկայում է բնակչության ժողովրդավարական ազատության, քաղաքականության նկատմամբ սեփական վարքի հնարավորության առկայություն:

Ընդհանրապես ժողովրդավարությունը՝ ժողովրդաիշխանությունը, և չմասնակցությունը՝ մասնակցությունից քաղաքացիների հրաժարումը, վատ համատեղվող երևույթներ են²: Այդ իսկ պատճառով էլ հասարակությունը կարևորում է յուրաքանչյուր անդամի ակտիվ մասնակցությունը և ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքին, քանի որ միայն ակտիվ մասնակցությամբ է պայմանավորված ժողովրդի ու իշխանության միջև գոյություն ունեցող անջրպետի հաղթահարումը և ժողովրդավարական երկրների կայացումը:

¹ Diamond L., Political culture and democracy in developing countries, USA, 1993, p. 35.

² Շափաղաթյան Յ., էջ 116:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԿՎՈՒԹՅԱՆ ԿԱՅՁՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Բանալի բառեր՝ քաղաքական մասնակցություն, չմասնակցություն, ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն, քաղաքացիական ներգրավվածություն, գործնական քաղաքականություն, քաղաքական մշակույթ

Հոդվածում ուսումնասիրվել են քաղաքական մասնակցության հիմնահարցերը: Քաղաքական կյանքին մարդկանց մասնակցության փաստի վրա ուշադրություն է դարձվել անտիկ ժամանակներից սկսած: Պետք է նշել, որ քաղաքական կյանքին մասնակցությունը նպաստում է անհատի քաղաքացիական հատկանիշների ձևավորմանը և պայմաններ է ստեղծում, որ անհատն իրեն զգա պետության լիարժեք քաղաքացի: Քաղաքական մասնակցությունը (չմասնակցությունը) անհատի քաղաքական սոցիալականացման և քաղաքական ակտիվության զարգացման կարևորագույն գործոն է հանդիսանում: Դա է պատճառը, որ ժամանակակից պայմաններում քաղաքական մասնակցության հիմնահարցը դարձել է գործնական քաղաքականության իրականացման կենտրոնական խնդիրներից մեկը:

Առնակ Սարգսյան

**ПОЛИТИЧЕСКОЕ УЧАСТИЕ КАК ВАЖНЕЙШАЯ ПРЕДПОСЫЛКА СТАНОВЛЕНИЯ
ДЕМОКРАТИЧЕСКОГО И ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА**

Ключевые слова: Политическое участие/неучастие, демократия, гражданское общество, гражданская вовлечённость, практическая политика, политическая культура

В статье рассмотрены вопросы участия людей в политической жизни своей страны. Интерес к этому вопросу проявлялся с давнейших времен. Следует отметить, что участие индивида в политической жизни страны создает условия для формирования гражданских характеристик личности, чтобы чувствовать себя полноценным гражданином своего государства. Политическое участие/неучастие является важным фактором политической социализации личности, развития ее политической активности. Именно поэтому в современных условиях проблема политического участия/неучастия становится одной из центральных проблем в осуществлении практической политики.

Առնակ Սարգսյան

**POLITICAL PARTICIPATION AS A MAJOR PRECONDITIONS TO BUILD
DEMOCRACY AND CIVIL SOCIETY**

Keywords: Political participation, non-participation, democracy, civil society, civic engagement, practical politics, political culture

The article concerns the issues of political participation. People's participation in political life has been of a huge interest since the beginning of civilization. It should be noted, that individual participation in political life supports the formation of the civil characteristics and creates conditions for a person to feel a full citizen of his/her country. Political participation (non-participation) is an important factor of an individual's political socialization and the development of political activity. That is why in modern conditions the problem of political participation has become one of the central issues in the implementation of practical politics.